



Երևան, 7 Դեկտեմբեր, 2020

## ՏԵՐՈՒԱԿԱՆ ԱՊՈՃՅ

(միասնաբար արտասանուած)

Իմասպութիւն Հօր Յիսուս, զուր ինձ իմասպութիւն վրարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ԱՊՄՈՍ 94

### ԱՍՏՈՒԱԾ ԲՈԼՈՐԻՆ ԴԱՏԱԽՈՐԸ

**Ա**րդարահատոյց Աստուած, ցոյց տուր արդարութիւնդ:

Եւ, ով Դատաւոր ամբողջ աշխարհի,

անբարտաւան մարդոց հատուցանէ արժանին:

Մինչեւ Ե՞րբ, Տէր, մինչեւ Ե՞րբ ամբարիշտները պիտի յոխորտան,

չարագործները գոռոզ խօսքերով պիտի արտայայտուին,

Եւ իրենց չարիքներով պիտի հպարտանան:

Քու ժողովուրդդ կը ճզմեն, ո՞վ Տէր,

կը չարչարեն քեզի պատկանողները,

այրիներն ու պանդուխտները կը սպանեն,

Եւ որբերը կը կոտորեն, ըսելով.-

«Տէրը չի տեսներ, մեր հայրերուն Աստուածը

այս բաներուն ուշադրութիւն չի դարձներ»:

Յիմար մարդիկ, հասկցէք, դուք՝ անմիտներ, Ե՞րբ պիտի սորվիք:

Ան՝ որ ականջը ստեղծեց՝ ինք չի՝ լսեր,

ան՝ որ աչքը գոյացուց՝ ինք չի՝ տեսներ:

Ան՝ որ ազգերը կը սաստէ եւ իր գիտութեան մեջ կը դաստիարակէ՝

նաեւ զանոնք պիտի չդատապարտէ»:

Տէրը գիտէ ինչ որ մարդիկ կը խորհիմ, եւ անոնց խորհուրդներուն ոչնչութիւն ըլլալը:

## ՃԱՐԱԿԱՆ-ԱՊՈՃՅ

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:**

**Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:**

**Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց ալքայութիւն:**

**Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:**

**Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեղ ողորմեա:**

**Պահապան ամենայնի Քրիստոս,**  
ազ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի զնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ՕՐՈՒԱՆ ՆԻԹՁԼ**  
ՀԱՅԻԵԼԻ ՄԱՐԳԱՐԷՇՈՒԹԻՒՆ  
7:1-14 ԳԼԽ

**ԴԱՆԻԵԼԻ ՉՈՐՍ ԿԵՆԴԱԿԻՆԵՐՈՒ ՏԵՍԻՔԸ (7:1-8)**

Դանիել անմիջապէս կ'արածանգրէ գեսած երազը, որպէսզի զայիք սերունդները կարդան եւ ըստ այնմ պարբռասպ ըլլան, որպէսզի անակնալի չգան: Այս իսկ է նաև նապարակը ամբողջ Ասպուածաշունչին, եթէ երբեք արձանագրուեցան այն բոլոր պարզամները, գեսիքլներն ու մարզարեական յայգնութիւնները, որպէսզի կարդացողը հասկնայ եւ ըստ այնմ պարբռասպուի:

Միւս կողմէ, նաև կարելի է նմանութեան եզրեր գրնել, ինչպէս Յայգնութիւն Յովիաննու գիրքին մէջ, այնպէս ալ Դանիելի գիրքին մէջ, երբ կը փրուի գեսիլք մը Դանիելին, որուն բովանդակութիւնը կու զայ բացաբրելու եւ յայգնելու ժամանակակից, ինչպէս նաև յեփագայ ժամանակներուն թագաւորութիւնները, կայսրութիւնները ու բոլոր պարահելիքները:

Հեփաքրքրական բաժինը նաև այն է, որ այս գեսիլքը կարծէք մէկ այլ ուրիշ գարքերակն է Նարուգորոնոսորի գեսած առաջին երազին, այն արձանը, որ գարքեր գեսակի մեփաղներէ շինուած էր, եւ, սակայն, որպէս շարունակութիւն, Դանիելի կը փրուի այս անգամ գեսիլք մը որ կապուած է շաբ աւելի զայիք ժամանակներուն մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուապը: Դանիելին փրուած գեսիլքը կը ներկայացնի կենդանակերպերով, որոնք նոյնանման են Յովիաննէսի գեսած գեսիլքին Յայգնութեան գիրքին մէջ (Յայգն 13գլի):

Ժամանակի ընթացքին, եկեղեցական հայրերու մօպ այս կենդանակերպերը բացաբրուած են որպէս ժամանակակից, եւ կամ զայիք թագաւորութիւնները կամ կայսրութիւնները հասնելով մինչեւ Քրիստոսի երկրորդ գալուապը:

Տեսիլքին բովանդակութիւնն է:

Երկինքէն չորս հովեր.

Ծով

Ծովէն ելած չորս մեծ գազաններ.

1. Առիծի պէս, արծիւի թեւերով: Անոր թեւերը փրցուեցան ու երկրէն վերցուեցաւ եւ մարդու պէս ովքերու վրայ կայնեցաւ ու անոր մարդու սիրս փրուեցաւ:
2. Արջի նման: Բերանը՝ ակռաներուն մէջ՝ երեք կողի ոսկոր կար, եւ ըսուեցաւ. «Ելիր, շաբ միս կեր»:
3. Ինձի նման, յովազ, որուն կռնակին վրայ թռչունի չորս թեւեր կային: Չորս գլուխ ունէր:
4. Ահեղ, սոսկալի ու խիստ զօրաւոր: Մեծ երկաթէ ակռաներ ունէր: Կ'ուփէր, կը փշրէր ու մնացածը ովքերովը կը կոխվուիրէ: Միւսներէն գարքեր էր: Տար եղիւր ունէր: Եղիւրին վրայ մարդու աշքերու պէս աշքեր ու մեծ բաներ խօսող բերան կար:

**ՏԵՍԻՔԸ ԱՆՈՐ, ՈՐ ՅԱՄԻՏԵՆԱԿԱՆ Է (7:9-14)**

Այս գեսիլքներէն յեփոյ, նաև Դանիելին կը փրուի մէկ այլ ուրիշ գեսիլք մը, կապուած այս անգամ Հինաւորոցին, որուն զգեսպը՝ ծիւնի պէս ճերմակ ու զիխուն մազը մաքուր բուրդի պէս: Անոր աթոռը՝ կրակի բոցի պէս ու անիները վառած կրակի պէս: Այս բացաբրութիւնները կը վերաբերին Քրիստոսին, որ պիտի զայ Դանիելու աշխարհը: Հոգ չէ թէ ինչպիսի կայսրութիւններ կամ պետութիւններ եկած են կամ պիտի զան, աւարտին, սակայն, Ասպուած Ինք է որ պիտի թագաւորէ, որովհետեւ Անոր թագաւորութիւնը յանիփենական է: